<<ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեմա՝ Կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները

Առարկա՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Հովսեփյան

Ուսումնական հաստատություն՝ Հ. Խաչատրյանի անվ. հ. 199 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1 Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը.....5

1.1 Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները.....5

1.2 Իմացական կարողությունների զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում.....7

Գլուխ 2 Դիդակտիկական խաղերի դերը կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման գործում.....11

2.1 Դիդակտիկական խաղերի էությունը.....11

2.2 Իմացական կարողությունների ձևավորումն ու զարգացումը խաղի միջոցով.....14

2.3 Չանաչողական գործընթացի խթանման միջոցները.....16

Եզրակացություն.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է կարևոր շրջան անձի կայացման և զարգացման համար: Այն կախված է երեխային շրջապատող սոցիալական և ֆիզիկական միջավայրից՝ ընտանիք, դպրոց, ընկերներ և այլն: Կրտսեր դպրոցական տարիքում աշակերտները արդեն կարողանում են ճանաչել առարկաների նմանություններն ու տարբերությունները՝ ելնելով նրանց առանձնահատկություններից: Տարրական դպրոցում ձևավորվում է աշակերտի <<Ես>>-ը, նրանք ձեռք են բերում անձնային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, հետաքրքրասիրությունը, ինչ-որ նոր բան սովորելու հակումը և դրա հետագա զարգացման և կայունացման համար պետք է ստեղծել համապատասխան միջավայր: Անվիճելի է այն պաստը, որ յուրաքանչյուր երեխա եզակի է, անկրկնելի և ունի զարգացման իր ուղին:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ կրտսեր դպրոցական տարիքը հանդես է գալիս որպես երեխայի հոգեկան գործընթացների զարգացման սենզիտիվ շրջան և արդի ժամանակաշրջանում դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում նրանց ստեղծագործական մտածողության, ճանաչողական հետաքրքրությունների և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Թեմայի նպատակն է ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները և խաղային տեխնոլոգիաների դերը այդ կարողությունների ձևավորման և զարգացման գործում:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները
- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց կարևորությունն ու դերը երեխայի կյանքում

- Ուսումնասիրել խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների ձևավորման և զարգացման գործում

ԳԼՈՒԽ 1

Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը

1.1 Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները

Կրտսեր դպրոցական տարիքն ընդգրկում է 6-ից 9-10 տարեկան ընկած ժամանակահատվածը: Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման, անհատի օնտոգենիկ զարգացման փուլն է: Այս տարիքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում մի այնպիսի շրջանի, երբ երեխան արդեն սկսում է նոր դերեր կրել, տարբեր պահանջներ իրականացնել, պատասխանատու լինել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում հիմնականում անհրաժեշտության և ցանկության դրդապատճառները: Հասուն կյանքը երեխան բացահայտում է առաջնորդվելով անհրաժեշության պահանջմունքով, իսկ դրդված լինելով ցանկության պահանջմունքով՝ երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը իրեն մանկության աշխարհ է վերադարձնում, որտեղ էլ ամենը ծանոթ է, ապահով է, չկան որոշակի պահանջներ և պարտականություններ: Կրտսեր դպրոցականների զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Հոգեկան զարգացման կենտրոնում հայտնվում է կամածինության ձևավորումը՝ (պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության ծրագիր):

Ճիշտ է, կրտսեր դպրոցական տարիքում կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, սակայն դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ

պատճառով էլ դպրոցական կյանքի սկզբնական շրջանում կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի առկայությունը, որն էլ նպաստում է ուսման հանդեպ երեխայի հետաքրքրության բարձրացմանը: Այս տարիքում մեծ է նաև երեխայի շարժվելու պահանջմունքը, ուստի ուսուցիչը դասապրոցեսի ընթացքում պետք է շարժողական խաղեր կիրառի, որոնք էլ իրենց հերթին կնպաստեն աշակերտների կենտրոնալու կարողության բարձրացմանը, ինչպես նաև ուշադրության զարգացմանը: Եթե ուսուցիչը հմուտ է, ապա նա կարող է երեխաների հանգիստը կազմակերպել՝ ներառելով շարժողական խաղեր և վարժություններ, որոնց ժամանակ երեխան կլիցքաթափվի և կկարողանա ներգրավվել ուսուցման գործընթացին: Նոր տպավորություններ ստանալու պահանջը կրտսեր դպրոցականների համար կարևոր է, որոնց հիման վրա էլ ձևավորվում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման պահանջմունքները: Արդեն 2-3-րդ դասարաններում ի հայտ են գալիս սոցիալական դրդապատճառների նոր համակարգ: Ուսուցչի գովասանքը, գնահատականը աշակերտի համար կարևորվում են ավելի շուտ, իսկ հասակակիցների կարծիքը ավելի ուշ է ազդում իր անձի վերաբերյալ: Հենց այս ամենով էլ պայմանավորված՝ Ես-ի ինքնահաստատում և սոցիալական նոր դերերի գիտակցում է տեղի ունենում: Ուսուցչի դերը շատ կարևոր է կրտսեր դպրոցականների Ես-ի ինքնահաստատման, հետաքրքրության պահպանման, երեխայի դրդապատճառների առաջացման համար:

Հարկ է նաև նշել, որ բարոյական դրդապատճառների ձևավորումը առաջնային են կրտսեր դպրոցականների համար, որտեղ կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք ազդում են իրենց արտաքին կողմերով և փոփոխական բնույթ են կրում (սիրած մուլտֆիլմի կամ հեռուստատեսային հերոս:)

Դպրոց ընդունվելու առաջին տարիներին կրտսեր դպրոցականների համար ուսուցիչը համարվում է միակ և անկոտրում անձնավորությունը, ով իրենց համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Հիմնականում ուսուցչին է ուղղված աշակերտի շփումը և ուսուցիչն էլ ապահովում է

համադասարանցիների միմյանց հետ շփումը: Սա էլ իր հերթին պատճառ է դառնում երեխայի հասարակական շփումների ձևավորմանը:

Կրտսեր դպրոցականների զգացմունքների բովանդակությունը դառնում է ավելի գիտակցված և զսպված, քանի որ նա արդեն ներգրավվում է ուսումնական գործունեության մեջ: Դժվարություններ հաղթահարելը, որոշակի մտավոր գործողություններ կատարելը, մրցակցությունն արդեն իսկ դրական զգացմունք է առաջացնում կրտսեր դպրոցականների մոտ: Այս տարիքում բարոյական նորմերի և կանոնների ներքնայնացում է տեղի ունենում, որի մեջ մեծ դեր ունեն մեծահասակները, ովքեր էլ երեխային ընդունելի վարքագծեր, կանոններ և նորմեր են ներկայացնում, որոնք էլ ձևավորում են երեխայի բարոյական ինքնագիտակցությունը: Զարգանում են հետաքրքրությունը, ճանաչման հաճույքը, կասկածը, զարմանքը՝ որպես ինտելեկտուալ զգացմունքներ: Ի հայտ են գալիս զգացմունքների տարբերակում: Զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ են փոխարինվում, օրինակ՝ վատն ու լավը, գեղեցիկն ու տգեղը և այլն:

1.2 Իմացական կարողությունների զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում

Ընկալման զարգացումը: Առանձին հոգեկան գործընթացների զարգացումը կատարվում է կրտսեր դպրոցական տարիքի ողջ տևողության ընթացքում: Երեխաները դպրոց են գալիս արդեն ընկալման բավականաչափ պրոցեսներ ունենալով: Ընկալման մակարդակը կրտսեր դպրոցականների մոտ ուսուցման գործընթացի սկզբնական շրջանում սերտորեն պայմանավորված է նրանց կատարած գործողություններով և պրակտիկ գործունեությամբ: Ցայտուն արտահայտված հուզականությունը բնորոշ է նրանց ընկալմանը: Երեխաները առաջին հերթին ընկալում են առարկաների հատկանիշները, այն երևույթները, որոնք անմիջական հուզական արձագանք են առաջացնում: Կրտսեր

դպրոցականների ընկալումն աստիճանաբար դառնում է կառավարվող և նպատակաուղղված, եթե ուսուցման գործընթացը կազմակերպվում է ճշտորեն՝ ուսուցման զննականության սկզբունքն ապահովելով: Աշակերտները սովորում են ոչ միայն դիտել առարկան, այլև զննել այն, եզրահանգումներ անել, բացահայտել առարկայի այս կամ այն հատկանիշը, բնութագրել այն և այլն: Այս ամենի արդյունքում էլ ուսումնական գործունեության արդյունավետությունը կբարձրանա:

Ուշադրության զարգացումը: Նոր դպրոց ընդունվող երեխաները դեռևս նպատակասլաց կերպով ուշադրությունը կենտրոնացնելու ընդունակություն չունեն: Նրանք հիմնականում ուշադրություն են դարձնում այն առարկաների և երևույթների վրա, որոնք անմիջականորեն հետաքրքրություն են առաջացնում և աչք են զարնում իրենց անսովորությամբ և պայծառությամբ: Կրտսեր դպրոցականների ուշադրության հիմնական առանձնահատկությունը ոչ կամածինությունն է: Անհրաժեշտ ուսումնական նյութի վրա երեխան կամքի ուժով չի կարող իր ուշադրությունը որոշակի ժամանակով բևեռել: Կրտսեր դպրոցականների կամածին ուշադրությունը զարգանում է հենց ուսումնական գործունեության ընթացքում: Ուսուցչի վերահսկողությամբ և նրա տված ցուցումների շնորհիվ երեխան անընդհատ ձեռք է բերում ինքնուրույն աշխատելու կարողություն, նպատակ է դնում իր առջև և փորձում կատարել գործողությունները: Ուսումնական գործունեության նկատմամբ հսկողությունը հենց իր՝ աշակերտի կամային ուշադրությունն է: Տարրական դպրոցում ուսուցման գործընթացը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, որն էլ լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում է հնարավոր իրականացնել: Կրտսեր դպրոցականների ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը զարգանում են մեծահասակների օգնությամբ՝ ուսումնական գործունեության ընթացքում:

Մտածողության զարգացումը: Այս տարիքում մտածողության զարգացումը առաջնային պլան է մղվում: Դրա շնորհիվ զարգանում և վերակառուցվում են հենց մտածական գործընթացները: Կրտսեր դպրոցականների մտածողությունը

շատ կողմերով հիշեցնում է նախադպրոցական մտածողությանը: Մտածելիս երեխաները հենվում են կամ իրական առարկաների կամ դրանց փոխարինող պատկերների վրա: Ուսումնական գործունեության ընթացքում մտածողությունը դառնում է ավելի տրամաբանական, ճկուն և ինքնուրույն: Դպրոց ընդունվելու առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը կառուցվում է այնպես, որ բառատրամաբանական մտածողությունը նկատելիորեն զարգանում է: Կրտսեր դպրոցականների մոտ ուսուցման ընթացքում ձևավորվում են գիտական հասկացությունները: Դրանց յուրացման համար երեխաները պետք է ունենան պատկերացումներ՝ դեռևս նախադպրոցական տարիքից, որոնք շարունակվում են դրսևորվել դպրոցից դուրս՝ հենվելով ամեն երեխայի սեփական փորձի վրա: Երեխայի մտածողության բոլոր գործընթացները զարգանում են հենց գիտական հասկացությունների ձևավորումից հետո:

Հիշողության զարգացումը: Տարրական դպրոցում երեխան ձգտում է անփոփոխ կերպով մտապահել արտաքնապես տպավորիչ և հուզիչ իրադարձությունները, պատմությունները: Սակայն դպրոցական կյանքի բնույթն այնպիսինն է, որ երեխայից պահանջվում է կանխամտածված կերպով մտապահել ուսումնական նյութը: Կրտսեր դպրոցականների հիշողության արդյունավետությունը կախված է մնեմիկական խնդրի բնույթը ըմբռնելուց և մտապահման և վերարտադրության հնարներին և եղանակներին տիրապետելու աստիճանից: Կրտսեր դպրացականին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ տեղեկություն և կարողանալ այն վերարտադրել: Ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը օգնում է երեխաներին մտապահման որոշակի հմտություններ կիրառել՝ իմաստավորված մտապահում (իմաստային խմբավորում, համեմատություն, իմաստային տարրերի բաժանում և այլն) և վերարադրման հնարներ: Սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականները մտապահվող նյութի մեջ իմաստային տարրերը դժվարանում են առանձնացնել, որն էլ հնարավոր է հմտացնել փոքր տեքստերի և տարբեր նկարների մտապահման գործընթացից:

Խոսքի զարգացումը: Երեխայի բառապաշարը կրտսեր դպրոցական տարիքում բուռն կերպով հարստանում է, զարգանում է նաև կապակցված խոսքը:

Ուսուցիչը պետք է օժանդակի այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր (խոսքի ունկնդրում, ֆիլմերի դիտում), դասաժամերին ստեղծելով հաղորդակցվելու, արտահայտվելու հնարավորություններ, առաջացնելով արտահայտվելու, գեղեցիկ խոսելու պահանջմունքներ: Այս տարիքում է ձևավորվում նաև երեխայի գրավոր խոսքը, որն էլ կամային ջանքեր պահանջող, բավականին ծանր և երկարատև գործընթաց է և որի ընթացքում զարգանում է ոչ միայն նրա գրագետ խոսք կառուցելու բազմաբաղադրիչ կարողությունը, այլև անձնային բազմաթիվ որակներ, որոնք հետագա ուսումնական գործունեության համար կարևոր են:

ԳԼՈՒԽ 2

Դիդակտիկական խաղերի դերը կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման գործում

2.1 Դիդակտիկական խաղերի Էությունը

Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար գործունեությունը համարվում է ուսումը, սակայն երեխաների մոտ դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այս պատճառով էլ ուսումնական գործունեության սկզբնական շրջանում կարևորվում է խաղային էլեմենտների առկայությունը, որոնք էլ նպաստում են ուսման հանդեպ աշակերտների հետաքրքրության բարձրացմանը: Շարժվելու պահանջմունքը ևս մեծ է այս տարիքում, ուստի ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի նաև շարժողական խաղեր, որոնք էլ նպաստում են աշակերտների կենտրոնանալու կարողությանը, ինչպես նաև զարգացնում են նրանց ուշադրությունը: Այս ամենով էլ պայմանավորված՝ կարելի է եզրակացնել, որ ուսումնական գործընթացները կազմակերպելիս պետք է դիդակտիկ խաղեր շատ կիրառվեն:

Երեխայի ներաշխարհ թափանցելու յուրատեսակ միջոցներից մեկն էլ համարվում է խաղը: Խաղը հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտների ստեղծագործական մտածողությունը, որոշակի արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակչական բազմաթիվ խնդիրների լուծմանը: Խաղալու արդյունքում երեխային թվում է, թե ինքն ուղղակի խաղում է, որոշակի դերեր է կատարում: Իրականում դա այդպես չէ, որովհետև

ցանկացած դիդակտիկական խաղ երեխային այնպիսի խնդիրներ է առաջադրում, որոնց լուծման համար նա մտավոր լարվածություն է ցուցաբերում: Այս ամենով էլ պայմանավորված կարելի է ասել, որ երեխան կյանքի դժվարին իրավիճակներ է հաղթահարում: Բոլոր այս գործողությունների արդյունքում էլ երեխաների մեջ դաստիարակվում են այնպիսի բարոյական հատկանիշներ, ինչպիսիք են պատասխանատվության զգացումը, ընկերասիրությունը, աշխատասիրությունը, վճռականությունը և այլն: Հենց դիդակտիկական խաղերի շնորհիվ էլ աշակերտը դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ, այսինքն՝ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից՝ ունակ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն:

Ցանկացած խաղ ընտրելիս պետք է շեշտը դնել կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունների վրա: Աշակերտի ինքնաճանաչման և հաղորդակցման միակ միջոցը խաղն է, հատկապես կարևորվում է այն խաղը, որը հորինում է հենց ինքը: Կրտսեր դպրոցականները խաղի ժամանակ ցուցաբերում են վստահություն, համարձակություն, կամքի ուժ, իրավիճակին ստեղծաբար մոտենալու կարողություն, այսինքն բոլոր այն կարևոր որակները, որոնք լավատեսություն են ձևավորում:

Դիդակտիկական խաղերը ըստ իրենց բովանդակության լինում են՝ սյուժետա – դերային և խաղ -վարժություններ:

Սյուժետա-դերային են համարվում այն խաղերը, որոնց ընթացքում երեխան կարողանում է դրսևորել իր ստեղծագործելու ցանկությունն ու կարողությունները, ազատության և ինքնուրույնության ձգտումները, սեփական տպավորությունները ու պատկերացումները, ինչպես նաև կարծիքն ու վերաբերմունքը արտահայտելու հնարավորությունները: Բնույթով սյուժետա-դերային խաղերը ստեղծագործական են:

Սյուժետա-դերային խաղերում երեխան կարողանում է արտացոլել ոչ միայն առանձին պատկերացումներ կամ տպավորություններ, այլ նաև շատ տարբեր իրադրություններ, հասարակական երևույթներ կամ անձնական փորձից փոքրիկ դրվագներ: Հետևաբար, նշվածը վերարտադրվում է երեխայի սեփական դիրքորոշմամբ և իր մեջ պարունակում է քննադատություն, վերլուծություն և

բազում մոտեցումներ։ Կրտսեր դպրոցականների կողմից սյուժետա-դերային խաղերը ընկալվում են ամենայն լրջությամբ, նրանց կողմից պահանջվում է մեծ ջանքեր, սակայն դրանց նպատակն ու արդյունքը երևակայական են։ Որպեսզի հասնի խաղի նպատակին, կրտսեր դպրոցականը պետք է կարողանա լուծել բարդ՝ իրական կյանքում անլուծելի խնդիրներ, ինչը հնարավոր է իրականացնել միայն երևակայական կերպարների ստեղծման միջոցով։ Խաղի ընթացքում կրտսեր դպրոցականը փորձում է հորինել նոր կերպարներ և ստեղծագործել։

Դերը համարվում է սյուժետադերային խաղերի առանցքային կառուցվածքային տարրը։ Դերերի օգնությամբ դպրոցականները կարողանում են նույնացվել իրենց սյուժեի կերպարներին, փորձում են արտացոլել գործառույթներ և հարաբերություններ, որոնք բնորոշ են այդ կերպարին։ Ցանկացած դեր, որը իրականացնում է դպրոցականը, պարտադրում է վարքագծի և հարաբերությունների կանոններ, որոնք յուրացվում և գիտակցվում են խաղի ընթացքում, դառնում են ընդունելի և սովորական, այնուհետև փոխանցվում են դպրոցականի իրական կյանք։

Խաղ–վարժությունները նպաստում են կրտսեր դպրոցականի մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը, որոնցում մեր դեր ունի դիդակտիկական խնդիրը։

Խաղ –վարժությունները սովորական առաջադրանքներից տարբերվում են խնդրի ոչ սովորական դրվածքով (կռահել, գտնել), դրանք ներկայացվում են գրական հեքիաթի որևէ հերոսի անունով (Վինի Թուխ, Բուրատինո) և իրենց մեջ պարունակում են խնդիր ու խաղային գործողություններ։ Դպրոցականների կարողությունների ու հմտությունների մշակումը դիտվում է որպես խաղ–վարժությունների գլխավոր նպատակը։

2.2 Իմացական կարողությունների ձևավորումն ու զարգացումը խաղի միջոցով

Կրտսեր դպրոցական տարիքում կարևորվում է հասակակիցների հետ շփումը, քանի որ նրանք սովորում են ընդօրինակել միմյանց (ցանկալի և անցանկալի վարք)։ Խաղի ընթացքում դպրոցականի մոտ առաջանում են մի շարք զգացումներ, որոնք երբեմն արտահայտվում են հիասթափության, վախի, վիրավորանքի միջոցով։

Խաղը դիտարկվում է որպես գործունեության ձև և իրականացնում է մի շարք գործառույթներ, ինչպիսիք են՝ զարգացնող, դաստիարակող, շփման և հաղորդակցման, կարգավորող և առողջարարական կամ թերապևտիկ։

Խաղային գործունեությունը ունի իր կառուցվածքը, որն էլ իր մեջ ներառում է դրդապատճառ, նպատակ, իրականացման միջոցներ, գործողության պլանավորում և վերջապես գործողության արդյունք։ Խաղային դերը կարևորագույն միավոր է դիտվում խաղային կառուցվածքում։ Խաղում փոխհարաբերությունները հետևյալն են՝ խաղային և իրական։ Կրտսեր դպրոցական տարիքում ավելի արդյունավետ է կազմակերպել այնպիսի ուսուցում, որը հիմնված կլինի խաղային գործունեության վրա։ Խաղի շնորհիվ դպրոցականները դառնում են դիտունակ, սովորում են համեմատություններ կատարել, ինչպես նաև դասակարգել առարկաները՝ համաձայն այս կամ այն հատկանիշների, որոնք էլ իրենց հերթին նպաստում են նրանց մտավոր զարգացմանը և զուգահեռաբար զարգացնում ընկալունակությունը, խոսքը, ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը։

Խաղը կազմակերպելիս՝ ուսուցիչը պետք է հասկանա, որ դրա կանոններն ու բովանդակությունը հասկանալի են աշակերտներին, խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի կրտսեր դպրոցականների գիտելիքների մակարդակին։ Խաղերը պետք է լինեն կոնկրետ և նպատակային՝ իսկ դրանց տևողությունն ու քանակը՝ չափավոր։ Ուսուցչի կազմակերպած խաղը պետք է

նպաստի աշակերտների հետաքրքրությունների ձևավորմանն ու գիտելիքների հարստացմանը: Խաղը երեխայի ինքնակատարելագործման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց է, որի միջոցով բացահայտվում են նրա բնավորության շատ գծեր: Խաղի օգնությամբ կրտսեր դպրոցականներին կարելի է նաև կրթել և դաստիարակել:

Կրտսեր դպրոցականները խաղային իրավիճակներում դառնում են առավել ուշադիր և գործուն: Խաղի ընթացքում աշակերտները կարողանում են մտածել տվյալ հարցի շուրջ: Քննարկման փուլում աշակերտը լսում է ընկերների կարծիքները, ընկալում այն և հնարավորություն է ունենում հայտնել իրենը: Այսինքն՝ երեխան համագործակցում է ընկերների հետ, կարողանում է կայացնել որոշում, որն էլ զարգացնում է նրա մտածողությունն ու բանավոր խոսքը:

Աշակերտները խաղային գործունեության մեջ հեշտությամբ են ներգրավվում, և որքան այն բազմազան լինի, այնքան գրավիչ է դառնում: Մանկավարժական փորձն ու պրակտիկան ցույց են տալիս, որ խաղն ինչ նպատակով էլ որ ընտրված լինի և որքան էլ ապահովված լինի բոլոր անհրաժեշտ պարագաներով, ուսուցչին է պատկանում այն կարևոր դերակատարումը, ում մասնակցության բացակայությունը կարող է հակառակ ազդեցություն ունենալ կամ էլ խաղը պարզապես ժամանց դառնա: Ուսուցիչը խաղի ընթացքում չպետք է կողմնապահություն անի, այլև պետք է հանդես գա որպես խորհրդատու, օգնական կամ հավասար խաղընկեր:

Այսպիսով կարող ենք նշել, որ բոլոր խաղերը նպաստում են կրտսեր դպրոցականների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Խաղային խնդիրների լուծման շնորհիվ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչիսիք են՝ հնարամտությունը, մտքի և մարմնի ճկունությունը, սրամտությունը, խոսքի զարգացումը:

2.3 Ճանաչողական գործընթացի խթանման միջոցները

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն նաև այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք էլ հիմնված են նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական, պասիվ և այլն։ Բոլոր այս բաժանումները հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը պասիվ լինել չի կարող, և միշտ չէ, որ այն աշակերտների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում։

Կրթական-ճանաչողական գործունեությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, կարողությունների և հմտությունների տիրապետման արդյունավետությունը որոշող գրավոր, բանավոր ստուգումներ և ինքնաստուգումներ։

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, կարողություններ և հմտություններ, պատասխանատվության զգացում ունենալուն։

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ, նշանակում է փոխներգործել, ինչ-որ մեկի հետ գտնվել երկխոսության մեջ։ Ինտերակտիվ մեթոդների ժամանակ կրտսեր դպրոցականները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում միմյանց հետ և ուսուցման գործընթացում գերակայում է սովորողների դերը։ Ինտերակտիվ ուսուցման ժամանակ առաջատար դերում դասավանդողը չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է։

Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ առաջադրանքներն ու վարժությունները, որոնք կատարում է սովորողները։ Սովորական վարժությունների և ինտերակտիվ վարժությունների տարբերությունն այն է, որ դրանք կատարելով՝ աշակերտը ոչ

միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում կյուրացնում է նոր նյութը:

Ակտիվ մեթոդը դասավանդողի և սովորողի փոխադարձ գործունեության ձև է, որի ժամանակ դասավանդողն ու սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, որտեղ էլ սովորողները ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Պասիվ ուսուցման գլխավոր դերակատարը համարվում է դասավանդողը, իսկ ակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն ու սովորողն հավասար իրավունքների դաշտում են: Պասիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ակտիվ ուսուցմանը բնորոշ է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճը: Երբեմն հավասարություն են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, և չնայած դրանց նմանություններին, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Ակտիվ ուսուցումը այնպիսի մեթոդների համակարգի կիրառում է ենթադրում, որի ընթացքում գիտելիքներն ու հմտությունները ինքնուրույն են ձեռք բերվում: Ուսուցման ավանդական մեթոդները կիրառվում են ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար, որի ընթացքում օգտագործվում են այնպիսի հնարներ, ինչպիսիք են հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ, պրոբլեմային իրավիճակի ստեղծում: Ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակատար է և դրա պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Ավանդական մեթոդները կիրառվում են նաև դրանց հետ զուգահեռ, օրինակ՝ պատմելը, դասախոսությունը, զրույցը և այլն: Ուսուցման գործընթացի այն հատվածում պետք է կիրառվեն ակտիվ մեթոդները, երբ անհրաժեշտություն է ծագում զարգացնել սովորողի ճանաչողական ակտիվությունը և մտածողությունը: Պետք է նշել նաև, որ ուսուցման գործընթացում ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ։ Վիգոտսկին ձևակերպել է մի օրենք, որի մեջ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ։ Երկխոսությունը ընկած է ակտիվ մեթոդների հիմքում, ինչպես ուսուցչի և սովորողների միջև, այնպես էլ իրենց՝ սովորողների միջև։ Հաղորդակցման հմտությունները, սովորողների խոսքը, խնդիրները միասին լուծելու կարողությունները նույնպես զարգանում են երկխոսության ընթացքում։Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, սովորեցնել ուսանողների ձեռք բերած գիտելիքները կիրառել, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար։ Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման ընթացքում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (հիշողություն, մտածողություն, ուշադրություն, խոսք և այլն։) Ակտիվ մեթոդներրի հետ են զուգակցվում նաև իլյուստրատիվ մեթոդները, կատարվում են մոդելների, գծագրերի, մեխանիզմների, ինչպես նաև սլայդների, ֆիլմերի ցուցադրություններ և այլն։

Շրջապատող աշխարհը մարդն ընկալում է իր 5 զգայարանների միջոցով։ Տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը։ Այս պատճառով էլ ուսումնական գործընթացներում տեսողականությանը կարևոր տեղ է հատկացվում։ Տեսողականացման տակ մենք հասկանում ենք ակներև պատկերների միջոցով ուսումնական բովանդակության կամ տեղեկատվության պատկերազարդումը։ Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ կրտսեր դպրոցական տարիքը համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Այս տարիքում մեծ հնարավորություններ են ստեղծվում անձի բարոյական որակների և դրական գծերի ձևավորման համար:

Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար է համարվում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերումը, որակապես փոփոխվում և ինտենսիվորեն զարգանում են ճանաչողական գործընթացները՝ ձեռք բերելով կամածին և միջնորդավորված բնույթ: Այս տարիքում դիդակտիկական խաղերի կիրառումը նպաստում են աշակերտների իմացական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Խաղային տեխնոլոգիաների կիրառման մեջ մեծ է ուսուցչի դերը, ով ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կարողանա հմտորեն կիրառել ճիշտ ընտրված խաղը՝ նպաստելով կրտսեր դպրոցականների ճանաչողական գործընթացների զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Զ. Ա. <<Տարրական կրթության մանկավարժություն>> Երևան-2013

2. Արզումանյան Ս. <<Հոգեբանություն>> Երևան-2003

3. Ա.Վ. Պետրովսկու խմբագրությամբ <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>> Երևան-1977

4. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., <<Մանկավարժություն>> Երևան-2005

5. Գյուլամիրյան Զ. <<Խաղալով սովորենք>> Երևան-2009

6. Մամյան Հ. <<Խաղը որպես ուսուցման միջոց։ Խաղերի կիրառությունը դպրոցում>> Երևան-2013

7. Նալչաջյան Ա. <<Հոգեբանության հիմունքներ>> Երևան-1997

8. Սիմոնյան Մ. <<Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության բարելավման միջոց>> Երևան-2004

9. Возрастная и педагогическая психология. Хрестоматия//М.: Академия 2010